05
№ 2 Ա-86

№ 2

Կիրակի 22 մարտի
1915 թ.

Յաւելուած № 1

ԱՐԵԳ

№ 2

Կիրակի 22 մարտի
1915 թ.

Յաւելուած № 1

Գրական-պատմական պատկերազարդ յաւելուած

«Արեգ»-ի յաւելուածը թերթի հետ միասին ամեն տեղ արժէ 5 կոպէկ։

ПА-2442
4586.

ԳԵՆԵՐԱԼ Ն. Վ. ՌՈՒԶՍԿԻ

ԶՈՅԵՐ

(Նոր կամաւորներին)

Սէրն ամեն տեղ է, կոյրերն էլ են տեսնում։ Սիրոյ ձայնը՝ ամենաուրախ, խուլերն էլ են լսում։
Սէրը զժոխքն է հրգեհել...

Մի հին ծեռագրից

— Պատերազմը երևակայութեամբ տեսնելու բան չէ,—խօսում էր քաղաքի հիւանդանոցից նոր եկած ընկերս, — և ոչ էլ երևակայութեամբ կարող ես զգալ, որքան էլ հարուստ երևակայութիւն ունենաս, այն բոլոր ապրումները, որոնց կարող ես ստանալ պատերազմի դաշտում։ Դրա համար էլ մի օր չէ պէտք. շարաթներ են պէտք և անընդհատ կռիւներ արկածալից ու արիւնառուշտ, որ ինքդ քեզ շրջապատիդ հետ ձուլես։

Հանեց պօրտսիգարն ու սկսեց ծխել։

Առաջ անդրշիրիմեան վերացնող մի քաղցր մեղեդու եղանակ լինէր նրա ձայնը։ Դեռ ես միջնակարգ դպրոցից եմ ճանաչում նրան. տպաւորուող էր ու տաքարիւն, որը մեզ իր ժամանակին թոյլ էր տուել նրան կնքելու «Սենտիմենտալ» մականունով, երբ նրա տարօրինակութիւններն էինք տեսել։ Մի հասարակ դէզք փիլիսոփայ կը դարձնէր նրան և նա էլ կընկնէր «ինչու»-ների աշխարհը և ընդհակառակը՝ աչք ծակող մի գէզքի մօտից, որը բոլորիս ուշքն ու միտքը կը գրաւէր — նա հեգնանքով էր անցնում։

Մի ժամանակուայ նրա կոպիտ ձայնը այժմ իր հոգու նման քնքշացել էր և ինչ որ խորութիւն էր պարունակում, որին շօշափելն անգամ որսի մի խորհրդաւոր թրթիռ էր առաջ բերում։

— Պատերազմի դաշտում կայ մի զօրեղ կռուան աւելի ևս բարբարոս լինելու համար. դա վախն է կամ անհատի վազը չլինելու անյուսութիւնը, — շարունակեց ընկերս՝ ծխախոտի թանձր քուլաները թողնելով բերնիցը։ — Ես վազը չեմ լինելու, մտածում էի ամեն առաւօտ, ուստի էսօր պիտի քանդեմ այն բոլոր պատուարները, ո-

բանց մարդն է ստեղծել, ես պիտի սպասնեմ հենց իրեն՝ մարդուն, թշնամի մարդուն, որպէսզի նա այլևս հնարաւորութիւն չունենայ իմ կեանքին վրայանց սպառնացող նորանոր ծրագիրներ կազմելու։

Յիշում եմ, հեռախուզութեան գնացած պահին մի քարի տակ—կիսամեռ գրութեան մէջ ցրտից սառած—պառաւնեցի թիւրքական «ակեսարի»։ Կարող էք երևակայել, թէ ես ինչ արի էդ մատները սառած մարդուն, ցրտից փէսացած մարդուն։ Չէ, ընկերներ, դուք չէք կարող երևակայել։ Նա անկարող էր ինձ որևէ վնաս հասցնել։ Մենակ էր։ Կանգնած էինք մի բարձր ոտի կրծքի, ուր բուրն ու բորանն էին խօսում։ Անդէն, թուլացած ու անօգնական մարդուն, որի իրաւունքների պաշտպանն էի ես մի ժամանակ, սաւինի մի հարուածով...

Այստեղ ընկերս ափսոսանքի մի շարժում արեց, ասես հէնց նոր ինքը յաւեց իր արածի համար և աջ ձեռքով մի հարուած իջեցրեց իր աջ ազդրին։

—Բայց ես պիտի սպանէի, որովհետև ուզիլ քանեչորս ժամ առաջ էդտեղից մեզ վրայ գնդակների տարափ էին թափել։

Ասենք պատերազմի դաշտում եղածս առաջին օրերը, մանաւանդ առաջին երկու-երեք ընդհարումներին մարդկայինը դեռ չէր մեռել իմ մէջ. դեռ ինչ որ հովեր, մոռացուած քնքշութիւններ ու վազուցուայ ապօտ ձայներ մտքերս էին յուզում, սիրտս թրթռացնում, ականջիս փսփսում։ Իսկ յետոյ... յետոյ քար սիրտ, բթացած միտք, արագ շարժուող ձեռքեր ու ոտքեր և արիւնկալած աչքեր։ Այո, այո, ընկերներ, ցնցումներ պէտք չեն. երբ աջ ու ձախ գնդակներ են, որ վզվզում են և գնդացիրի չիչկոց, որը անդադար է գործում, երբ մահը իր ոսկրոտ մատների տակ գիրկն է բացել էն լայնատարած բուք-բուրան սպիտակ դաշտում, ինչը կարող է վատահութիւն ու յոյս ներշնչել, թէ դու կարող ես կենդանի մնալ. ինչը կարող է կորով ու աւիւն ներշնչել...

Հեռու նրբութիւններ. ես գազան դարձայ։ Սոսկալի՝ քան ոտիւծը և ահիւնոտուշտ՝ քան գայլը։

Ես մարդ էի և գազան։

Առաւօտեան աչքերս բացելուն պէս, եթէ, ի հարկէ, քնելու տեղ էինք ունենում, լուացուելուց առաջ փամփուշտակալներս էի կապում, պակաս տեղերը նոր փամփուշտներով լրացնում, հրացանս էի զննում և երբ ամեն բան կարգին էր կամ կարգն էի ձգում՝ նոր ատամոքսս մասին էի մտածում։ Շատ անգամ էլ լաւ ցրտեր ուտելով՝ անքուն գիշերներ էի անցնում։

Մի խոր փոսի մէջ, որի վերևը հողով այնպէս էինք պատրաստում, որ կրակի ծոցերը չերկարեն և մեծ լոյս տարածեն, թշնամուց աննկատ մնալու համար—մենք նստած մի բան էինք մտածում՝ պատրաստ լինել սպանելու, եթէ թշնամի շարժուի մեր մօտերքում։

Մեր բոլորիս հէքիաթներն ու զրոյցը կռուի և այժի շուրջն էր պտտում. ականջներս միշտ ձայնի էր սպասում՝ ելնելու. մի անսովոր հնչիւն՝ և մենք կրակից խոկոն բաւական հեռանում էինք, որպէսզի անննկատելի մնանք, եթէ թշնամի է երևացել։

Ընկերս ձայնը բաւականին բարձրացրել էր, ասես մի սարից զէպի ձորը հրամաններ արձակող մի ոստայ լինէր։

Նորից ընկերոջս ձեռքը զէպի ձախ զրպանը գնաց, նորից ծխախոտի քուլաները մշուշով ծածկեցին նրա յուզուած զէմքը։

— Կեանքումս—ծանր-ծանր ու մեղմօրէն փոքր ինչ լռելուց յետոյ սկսեց ընկերս—ես միայն մի հաւատարիմ ընկեր եմ ունեցել, աւելի հաւատարիմ՝ քան շունը և աւելի սիրող՝ քան կոյսը. դա—հրացանս է եղել։ Այնտեղ, ուր մահն է շնչել ու արկածը խնդացել, նա երբեք չի շեղուել իր կէտնպատակից. նա միշտ պաշտպանել է ինձ և ինչպէս տեսնում էք՝ դեռ կենդանի եմ և շնչելու էլ հնարաւորութիւն ունեմ։ Օ՜, որքան քաղցր է ապրելը։ Ես նոր եմ իմանում կեանքի արժէքը, նա, որի կողքով միշտ անցնում ենք առանց նրան նկատելու։ Նոր եմ զգում, որ գիւղում որպէսզի աշխատաւորը հնարաւորութիւն ունենայ իր ստեղծագործող աշխատանքի ծանր լուծը անհոգօրէն տանելու՝ ապահով կեանք է պէտք, որ քաղաքի բազմահազար ամբոխի խճճուած կեանքը տեսնելու համար գարձեալ ապահով կեանք է պէտք և որ էդ ապահովութիւնը արեան գնով է ձեռք բերւում։ Օ՜, որքան քաղցր է մի երիտասարդի համար, ինչ ազգից էլ ուզում է լինի, իր ազգի ապահով կեանքը, իր ազգի մտաւոր ու ֆիզիքական ստեղծագործող կեանքը։ Ես էլ երիտասարդ եմ, էն էլ հայ երիտասարդ. ես էլ կարօտ եմ էդ ստեղծագործող կարմիր արևի ծագելուն. արևներ շատ կան, բայց նա հայի արևն է լինելու, որն այժմ խիտ ամպերով է ծածկուած։

Լռեց։

Համր մտքերն էին մեզ հետ զրուցողը։

Դուրսը ձմռնամերջի ցուրտն էր զոզում. սենեակում վառարանի թաց փայտը երկար թշչալուց յետոյ յանկարծ բռնկուեց ու ճարճատիւնով սկսուեց վառուել, որը մի զուրալի տրամադրութիւն առաջացրեց, ասես ինչ որ երազներ յարութիւն առան։

Մեղմ ժպիտ անցաւ ընկերոջս տանջուած դէմքով. մաշուած շուրթերը գոնդազօրէն մի քիչ դէպի կողք ձգուեցին, աչքերը դուրեկան արտայայտութիւն ստացան։

— Ես սկսել եմ գերբնական այժերին հաւատալ—ձեռքի ծխած գլանակը դէն շպրտելով՝ սկսեց խորհրդաւորութեամբ ընկերս, երկար լռելուց յետոյ.

—Թող սա ծիծաղելի չթուայ. մի երազ, ինչ որ թէական միտք, այն է՝ այս բանը եթէ այսպէս լինի, ցանկութիւնս էլ այսպէս կլինի, մէկից լսած ինչ որ պատահական խօսք—երբեմն ճակատագրական է դառնում։ Այո, ես սկսել եմ հաւատալ, եթէ ոչ հաւատալ՝ գոնէ զգալ, որ կարող է ճշտուել։ Եւ ինչու չընդունել, երբ զբոնց հետևանքներն ակնյայտնի են։ Լսածդ խօսքիցը, նայած թէ ինչպէսին է, կամ տանջւում ես, կամ ուրախանում և դա նոյնքան սրտանց և այժող է լինում, ասես թէ կարծածը արդէն իրականութիւն է դառել։ Մի խօսքով՝ իրականութիւնն ու գերբնականը մեր էս պատահմանքներով լի աշխարհում այնպէս են խճճուել իրար, որ երբեմն կոպտօրէն ցցուելով անհատի առաջ՝ մի բոլէ կասկածի են ենթարկում իրենց գոյութիւնն ու մոլորանքի մէջ թողնում մարդուն։

Ճիշտ ինձ հետ էլ այդպէս պատահեց։

Երկու ամիս էր, ինչ կնոջս ու երեք տարեկան Վարդանիս Թիֆլիս էի թողել և անցել կամաւորների խմբի հետ զէպի Էրզրում ճանապարհը։ Ամեն անհատ իր հայրենիքին տալիք տուրքը, պարտք ունի. և ես պարտաւոր էի սրբութեամբ էդ տուրքը տալու։ Զուզեցի վատ պարտապանի նման պարտքատիրոջից շարունակ խուսափել, ինքս իմ առաջ չուզեցի փոքրոգի երեւալ։ Ինձ թւում էր, թէ էն հողը, ուր ես եմ կանգնած, լուր է առել իմ հայրենիքի հողից, քարից ու ջրից, թէ մենակ դու էիր, որ պարտքը չտուիր, մենակ դու էիր, որ մեզ մաքիցդ հանեցիր, մենակ դու էիր, որ դիմամբ կոյր ու խուլ ձեռացար մեր արիւն-արցունք քամելու, քարերից օգնութիւն աղերսելու ժամին։ Ինձ թւում էր, թէ անշունչ իրերն անգամ ձայն են տալիս ու այդ ձայնը գարերով ատանջուած, անզօրութեան մէջ արցունքն ու աղօթքը միակ մեխիթարանքը դարձրած հայի ձայնն էր։ Այո, այո, դա միայն հայի ձայնն էր, որից կուրծքս ուռաւ, լքուեց...

Ու մի գեղեցիկ օր ես էլ կամաւորների հետ սահմանն անցայ։

Եւ այնուհետև ընկերս հրացան, զրոյց անողը քամի, համբէս էլ սպիտակ ձիւնով ծածկուած ու անյայտ։

Պատահում էր օրերով հացի երես չէինք տեսնում։ Շարունակ աւար առած ոչխար էինք ուտում և ջրի տեղ ձիւն։ Ջիւնը բռնելիս մէջ մի քիչ տաքացնում էինք ու սկսում ծծել. այնուամենայնիւ աչքներիս մի կտոր, թէկուզ և չոր, հացի մէջ էր։

Երբ իրականութիւնը քեզ չի համոզում, յոյսն է դառնում մարդու կռուանը, երերուն՝ ինչպէս մատամոլոր մարդը և դրաւիչ՝ ինչպէս անցած գարունները։

Թիւրքերին բաւական քշել էինք և բարձր տարը Բասենայ դաշտում մեզ դիրք էինք արել։ Թիւրքերի դիրքերն այժմ արդէն հեռու էին ու ցած, հովտում։ Մեր օրերն առաջուայ նման տագնապալից չէին։ հացի փոխարէն ուզանձած ցորեն էինք գտել թիւրքերի դիրքերում։ Տեսնելու բան էր, թէ ինչպէս սպանած «ասկեարի» վզից նրա ցորենով լիքը փոքրիկ պարկը հանում և անուշ էինք անում։ Մեռնողի ձեռքից վերջին պատառն էինք խլում, քաջ գիտենալով, որ մեր պաշարը դժուար կըզայ, եկած զէպքում էլ՝ բաւական ուշ։

Բայց պատմեմ, թէ ինչպէս հիւանդանոցն ընկայ։

Երկու ամիս անընդհատ կռիւներին մասնակցելով յոգնել էինք, հանգստի էին ուզտրկել. մեծ կռիւներից յետոյ՝ երկու կողմի զինուորներն էլ ասես թէ լռելեայն իրար խօսք են տալիս ընդհատել մի քանի շաբաթով կռիւը, մինչև նորից տրամադրուեն։ Այո, այո, մենակ սիրուհուն նամակ գրողներին ու բանաստեղծներին չէ յատուկ տրամադրութիւնը։

Այսպէս ընկերս նորից սկսեց ծիծաղել։

— Մի գիշեր ինձ էր յանձնուած թշնամուց վերցրած զէնքերի հաշուելը։ Մինչև փամփուշտները հաշուեցի, կէս գիշերն անցաւ։ Դեռ առաջս կուտակուած էր հրացանների ու ատրճանակների մի հսկայ կոյտ, որին երբ նայեցի՝ յոգնածութիւնը քնքշօրէն կոպերս փակեց։

Ուրիշ հնար չկար. առաւօտեան շատ վաղ, այսինքն մի երկու ժամից յետոյ պիտի ուղարկուէին, ուստի ինչ դրութեան մէջ էլ ընկնէի՝ պիտի վերջացնէի հաշուելը։

Երբ փամփուշտների արկղներն ատանձնացրի, ինձ թուաց, թէ այդ հազարաւոր փամփուշտներից մէկը ինձ համար էր կանխորոշուած, բայց այժմ վատնդն անցած կարելի է համարել։ Իսկ եթէ ստանէիր, մտածեցի ես։ Ոչ, ոչ, դեռ ապրել եմ ուզում. կին, երեխայ, ազատ հայրենիք կուզեմ տեսնել։

Սկսեցի ատրճանակների հաշուելը, որովհետև դրանք հրացաններից քիչ էին։

Ահա հայրենիքի միակ փրկութիւնը — առաջին իսկ մաուզէր ատրճանակ վերցնելիս մտածեցի ես։ Ու իմ աչքի առաջից անմիջապէս անցաւ իմ աւեր հայրենիքը, վաղեմի ազատ հայի օջաղը, Հայաստանը...

— Դրանք թիւրքիին են և թող Տաճկաստանը ազատեն այժմ կրակից։

Առաջս կանգնած էր մի սպիտակազգեստ կոյս՝ կանաչ ձիթենու ճիւղը ձեռքին։

— Ազատելու համար կրակող է պէտք,— լսեցի իմ ձայնը։

— Ազատութիւնը արիւնով է գնւում։

— Կը թափեմ արիւնս։

— Եթէ թափես արիւնդ, հայրենի երկրից երկինքը կըպարզուի, արեւն ու գարունը կիշխեն սիրան ու հոգը։

— ??!...—ուսերը վեր բաշեց ընկերս։

Ձեռքերս արագ շարժուեցին ու ատրճանակներս խլացան...

Մի վայրկեանում ես շատ պարզ տեսայ վշտից մաղերը փետող կնոջս ու հեկեկող Վարդանիս։

Ու թանձր գիշերը պատեց աչերս։

Երբ աչքերս բացի, բժիշկը ինչ որ բան էր փսփսում թէժ վառարանի կողքին կանգնած վշտատես խմբապետին։

Գնդակն անցել էր կնոջս ձախ կողմով։

Ասես մահը համբուրեց ճակատս։

— Բժիշկ...—տալիս ձայնեցի զարացող շնչով—բժիշկ...

Բժիշկը ցնցուեց ու դադարեց փսփսալը. կամացուկ մօտեցաւ մահճակալիս։

— Վատ ես զգում քեզ,—ասես հոգից ձայնը հասաւ ականջիս։

— Բժիշկ... ապրել եմ ուզում։

— Ապահով եղիր։

Դուրսը փաթիլ-փաթիլ ձիւն էր գալիս։

Ու տաք արցունքները վառում էին կոպերս։

— Ապրել էի ուզում և ապրեցի. պիտի գնամ հայրենիքիս «ապրել ուզել» սովորեցնեմ, որ նա էլ ապրի,— զուարթաձայն ասաց ընկերս ու արագ տաքի եկաւ։

Ան. Փանոսեան

ՁԱՆԳԱԿՆԵՐ

—

Կէս գիշերին՝ անապատէն լայնածիր
Կանգնել յոյսիս կարաւան.
Անեկերքի սաւերին մէջ, ցան ուցիր,
Հեռու լոյսեր կերևան։

Եւ կը դիտեմ անսահմանէն աւազի
Ոլոսիսը զմրուխտէ,
Վարագուրուած ժանեակներով երազի,
Որ ինձ այնպէս կը դիմէ։

Կոյս լուսթեան գրկին մէջը արծաթէ
Զանգակները կը գնգան.
Լուրթ եթերէն ճամբուս վրայ կը ծաթէ
Հէրեաթներու լուսընկան:

Զրրը՜նգ, զրրը՜ն՛գ... ձայնը անուշ զրզրան
Կը թրթռայ, կը մարէ.
Անէութեան մէջը հոգիս է զեղուն
Երկունքներով գոնարէ:

Եւ կը քալեմ կարաւանիս գնդոցով
Ճամբաներէն անշուշան
Դէպի հեռուն, անուրջներուս լոյսէ ծով,
Դէպի իմ մայր Ասիա շան...

Կէս գիշերին՝ անապատէն լայնածիր
Կանգնէ յոյսիս կարաւան.
Անեղերքի սաւերին մէջ, ցան ու ցիր,
Հեռու լոյսեր կերևան...

Ազատ-Վշտունի

ՋԱՒԱԴԻ ՎԷՐՔԵՐԸ

(Պատմուածք)

—

— Այ որդի, սիրը պակուելուդ տարին դեռ չի լրացել, ինչու՞ ես քո ծնողին ու ջահիլ հարսիդ սրի մէջ թողնում. համ էլ՝ չէ՞ դու միտուճար ես. թող էն ծնողների զաւակները ֆիդայի դառնան, որոնք շատ ունեն. Աստուածը սիրես, մեզ մի՛ ձգիր, մի՛ հեռանար.—արցունքն աչքերին ողերուում էր Գեօղալը իր միակ որդի Զաւադին, որ դեռ պատանի հասակից—հայ-թիւրքական ընդհարումների ժամանակից—իգիթի անուն էր վաստակել և այժմ Ռուս-թիւրքական պատերազմն սկսուելուն պէս՝ լսելով որ Սասունի հերոս Անդրանիկը կամաւորների խմբերը է կազմակերպում, որոշել էր թողնել ամեն ինչ և կամաւոր գնալ:

— Արցունքիդ մատաղ, այ մայրիկ, լաց մի՛ լինի. քու Զաւադը էն հայ ջահիլներից չէ, որոնց սիրտը քարի կտոր է և չեն ապրում հայ ազգի ցաւերով. իմ որոշումը քանդել չի լինի. ես պիտի գնամ կռուելու էն լաւ օրերի համար, որ էլ ոչ մի հայ մէր չը մտածի անդամ լայի մասին. իսկ իմ Սօնան կը փոխարինի ինձ և քեզ կը մխիթարի մինչև իմ վերադարձը. իսկ եթէ Տէրը չկամենայ իմ վերադարձը ու զոհ գնամ հայրենիքիս ազատութեան ճանապարհին, էլի չլաս. էնպէս համարիր, թէ ինձ մատաղ ես արել մեր դժբախտ ազգի ազատութեան սիրուն:

Զաւադի խօսքերը կարծես ազդեցին մօրը և նա, ասես հաշտուած դրութեանը, փորձեց դեռ ինքն էլ իր հերթին սփոփել իր ջահիլ հարսին: Իսկ Սօնան, ճիշտ է, օր ու գիշեր արցունք էր չափում, բայց էլի չէր հակառակում ամուսնու որոշման: Դարերի ազգային վրէժի հետ Զաւադի հոգում կուտակուած էր և իր հօր ապանութեան վրէժը, որին անօրէնները կը-սբրատել էին ազէսի տարին ու անհետ կորցրել:

— Սօնա ջան, իմ ազիզ ընկեր, չը վշտանաս, շուտ-շուտ նամակներ կը գրեմ. իմ պառաւ մօրը թէ ու թիկունք եղիր մինչև իմ վերադարձը. մեր ազգի ու օջախի պատիւը դու էլ թանկ գնահատիր, ինչպէս քո նախամայրերը հինգերորդ դարում.—մեռաս բարեի և սրատանդման այս վերջին խօսքերն էր ուղղում Զաւադը Սօնային:

Սօնան թէև սրտանց կրկամենար չլալ և ազամարդու արիութեամբ ճամբու գնել իր Զաւադին, բայց ակամայից ձայնը խղուեց, ասես մէկը կոկորդը սղմելիս լինէր, սիրտը թրթռաց, գունատուեց ու բազուկները տարածած ընկաւ ամուսնու գիրկը և այդպէս հաստատած պահ մի մեռաց, ապա վեհօրէն գլուխը բարձրացրեց, համբուրեց իր եարին ու ասաց.

— Ի՜մ Զաւադ, թող Աստուած օրհնի քու ճամբան, բաղկիդ ուժ տայ, որ քաջաբար սրբազան ուխտդ կատարելով՝ առողջ ու երջանիկ վերադառնաս իմ ու մօրդ գիրկը... Ամէն, իսկ եթէ չվերադառնաս, իսկ եթէ չվերադառնաս...

— Կը վերադառնամ, յոյսդ մի կտրիր, իմ աչքի լոյս. իսկ դու և մէրս աղօթեցէք մեր գործի յաջողութեան համար:

—

Զաւադը ասուած խոսման համաձայն յաճախ էր գրում իր սիրելիներին, նկարագրելով այն բոլորը, ինչ որ տեղի էր ունենում իրանց խմբի, թշնամու և շրջապատող ժողովուրդների հետ. այդ նամակների ընթերցումը Գեօղալի և Սօնայի ամենամեծ մխիթարանքն էր. վէպերից ու լեգենդներից էլ աւելի հաճոյք էր պատճառում նրանց ընթերցումը, թէև շատ յաճախ անընդհատ լալով էին կարդում. ու սկեսուրն ստիպում էր հարսին միենոյն նամակը երեք-չորս անգամ կարդալ՝ մինչև նորը կը ստանային: Իսկ կարդալուց յետոյ նրանք նամակները իրանց կրծքերի վրայ էին պահում՝ ասես ջերմացնելու համար: Զի նրանց Զաւադը մինչև կուրծքը ձիւնի մէջ խրուած՝ դիրքերում ժամերով հրսկում էր թշնամուն. և Զաւադի նամակները տաքացնելով՝ նրանք իրանց երևակայութեան մէջ ջերմացնում էին իրանց ցրտահար սիրելուն:

Բայց մէկէն Զաւադի նամակներն ընդհատուեցին. պատճառները շատ էին. փոստատներից շատ հեռու գտնուելը, բուք ու բորանը, վերջին օրերի խիստ փոթորկալի ապրումները—օր ու գիշեր դիրքերում անքուն, պաշտպան մնալ, օրերով անընդհատ յարձակման ու նահանջման դիմել, սրի քաշել, անխնայ կոտորել մինչև յոգնածութիւն, սիրելի ընկերների արիւնաշաղախ մահը տեսնել...

Ս.-ի մօտ գիրքեր մտնելու երրորդ օրուայ իրիկնապահն էր, երբ սպասուած օգնական ապատարար արշաւախումբը օգնութեան հասաւ երեք կողմից պաշարուած մի բուռը կամաւորներին:

Զաւադի աչ և ձախ կողմերին գիրք մտած ընկերները դեռ երէկուանից գնդակահար, չտած աչքերով նայում էին ամպամած երկնքին. նրանց մարմինը կծկուել էր ցրտից և մահացու վիրաւորի անոյշ գալարումների յանկարծակի ընդհատումից. նրանցից մէկը հրացանն այնպէս ամուր էր սղմել և ծայրը վեր ցցել, որ կարծես թէ գնդակահարելու է պատրաստուում վերևից դարեր շարունակ մեր մարթոտուելը անտարբեր դիտող անողորմ Աստծուն... Զաւադը նորէն և վերջին անգամ իր մարտիրոս ընկերների դիակները դիտելով, իր մինչև այդ պահ ունեցած սառնասրտութիւնն ու զգօնութիւնը կորցնելով՝ յուզմունքից բարձր ճիչ արձակեց, ամբողջ հոսակով կանգնեց և անելիւզ սկսեց կրակ տեղալ հանդիպակած բլրակին ամրացած թշնամու վրայ. առաջին հնդեակը խելակորոյս կրակելուն պէս՝ գնդակա-

հար և ուշագնաց տապալուեց գետնին....

Յաջորդ օրուայ առաւօտեան Զաւադը ուշքի գալով՝ նկատեց, որ գտնուում է իրանց կռուելու վայրի մօտակայ աւանի հիւանդանոցում. նա փորձեց բարձրանալ անկողնից, բայց գլուխը կապարի պէս ծանր էր և ձախ ուսին ու բազկին սուր ցաւ զգաց: Նա վիրաւորուած էր: Նրան սաստիկ թուլութիւն էր պատել: Ոտքերն էլ ցրտահար էին եղել: Զաւադի հարցումին թէ՝ երբ կարող կըլինի նորէն կռիւ վերադառնալ, բժիշկը պատասխանեց.

— Ամենաշատը երկու ամսից յետոյ:

Զաւադին այդ երկու ամիսը երկու տարուց էլ երկար էին թւում: Մարդու համար աւելի խոշոր հարուած չը կայ, քան ամիսներով անկողնում անգործ պառկելու դատապարտուելը: Նրան վշտացնում էր նաև այն, որ իր սիրելիներին երեք շաբթից աւելի է, ինչ նամակ չի գրել: Նա վախէր, որ իր նամակներն անտեսման սիրտանք էին պատճառում մօրն ու կնոջը և յոյս ունէր մի քանի օր յետոյ իր հոգում ամբարուած տպաւորութիւնները հաղորդել նրանց:

Զաւադի ցաւերը փոքր ինչ մեղմանալուց յետոյ, նրան կատարելապէս առողջացնելու համար տեղափոխեցին Թ. քաղաքը և տեղաւորեցին այնտեղի հիւանդանոցներից մէկում: Այստեղից Զաւադը հետեւեալ նամակը գրեց իւր մօրը.

«Մայր իմ, գիտեմ վշտացած և բարկացած կը լինես քո որդու վրայ. բայց անկարող էի գրել և մխիթարական էլ ոչինչ չկար գրելու: Ես տեսայ աւերակ դարձած շէն գիւղեր ու քաղաքներ, կողոպտուած և ապականուած սրբավայրեր. ես տեսայ շարան-շարան, որպէս անողորմ փոթորկից հալածուած կռունկների երամ, սիրելի վանքից փախչող ժողովուրդների. խողխողուած երեխաների, բռնաբարուած գեռատի աղջիկների և կանանց ու մորթոտուող ոգամարդկանց ազիզներում ճիշերը մինչև այսօր էլ լսում եմ գետ: Ես վիրաւոր և ցրտահար եմ, մայր, ինչպէս և գեղեցուն ապաւինած թեակոր կարապ, որ սրտանց կուզէր մնաց լինել՝ իր սիրելիների գլխին եկած ազէտը ապաւէս մոռանալու համար...

«Գիտեմ, ազի արցունքները կակօսեն խորշոմած այտերդ. բայց ինչ փոյթ. չէ՞ քո արցունքը մի կաթիլն է կազմում միայն համաշխարհային արցունքի ծովի...

«Ա՜խ, դու չգիտես, մայր, դու չգիտես. ողջ աշխարհը մի կատարեալ դժոխք է դարձել և չգիտես ինչու՝ մարդիկ իրար ըզկտում, իրար արիւն են խմում, որպէսզի որոշ ժամանակից յետոյ—կամ գուցէ հէնց հիմա—մի նոր սերունդ բիւրաւոր զոհերի դամբարանների վրայ աճած փարթամ ծաղիկներով իր կուրծքը զարդարած՝ կաքաւի աւերակների վրայ, միլիոնաւոր զոհերի արիւնից ալ կարմիր կարած...

«Մայրիկ, թերևս մարմնիս վէրքերը շուտով առողջանան, բայց ինչ փոյթ. ինչի՞ եմ պէտք ես, ինչի՞ են պէտք ինձ նման միլիոնաւոր մարդիկ. մեր հոգին ու սիրտը, մեր լաւագոյն իդէալները ու նպատակները յօշոտուած են, արնաշաղախ...

«Մայրիկ, դու և Սօնաս աղօթեցէք Աստծուն ինձ նմանների անպատում վէրքերի բուժման և աշխարհի զօրեղների անպատում մեղքերի քաւութեան համար»:

Յար. Մելքումեան

Գեներալ Ռազկո Դիմիտրիև

ԲՕԼԳԱՐՈՒՀԻՆ

(Ռիան-Վազով)

Դ.

Պառաւ Իլիցան գիշերը շտապեց Իսքէր գետին հասնելու, որի այն կողմում հայգուկը իրեն սպասում էր: Նա շատ յուզուած էր: Պառաւը չկարողացաւ և չսպասեց հայր Պրիօրի տեղապահ բարկացկոտ վանահօրից խորհուրդ հարցնելու:

Նա մեծ դժուարութեամբ հասաւ վանքի միւս կողմում գտնուող ձորի լանջին և ընտրեց գետի երկայնքով ընկած ճանապարհը:

Աստեղազարդ երկինքը լուսաւորել էր գետի միւս կողմում երևացող լեռներն ու ժայռերը, որոնք ցերեկով սովորաբար ոչոտ էին երևում, իսկ այդ ժամանակ ազէտ էին գուշակում...

Պառաւ Իլիցայի աչքերն ու հոգին, որոնք երկիւղով և անհանգստութեամբ էին լցուած, մեծ դժբախտութիւն էին արտայայտում: Երբ նա հասաւ ձորի ամենաբարձր տեղը, յոգնած նստեց սառը գետնի վրայ մի կնձնի ծառի տակ:

Լեռներն առանձնութեան մէջ քնում էին... վայրենի բնութեան առանձնայատուկ խաղաղութիւնը տիրում էր ամենուրեք... միայն գետն էր երբեմն կատաղութիւնից փրփրում ձորի խորքում, որի այն կողմում բարձրանում

էին խաւարի մէջ կորած վանքի շինութիւնների տանիքները։

Աջ կողմից՝ Լուսիրբոզից լսւում էր տեղական շների հաչոցը։

Իլիցան վեր կացաւ գետնից, վախեցաւ գիւղի միջով գնալ, գիմեց ձախ կողմում գտնուող սարը և շտապեց դէպի այնտեղ։

Շուտով նա նեբքի իջաւ և բոլորովին մօտեցաւ Իսքէր գետին։ Նաւակը գտնուում էր գետի ափին։ Իլիցան գընաց դէպի այն տնակը, որտեղ սովորաբար քնում էր նաւավարը, սակայն ներսում ոչ ոք չկար. հաւանօրէն նաւավարն էլ վերջին ժամանակները վախենում էր այնտեղ քնելու։

Դրանից սարսափած պառաւը չիմացաւ ինչ անել։ Նա մօտեցաւ նաւակին։ Իսքէրը կատաղաբար փրփրում էր... Նրա սև ալիքները պղտորւում էին... մի տեսակ սարսուռ անցաւ Իլիցայի մարմնով...

— Ինչ անել... սպասել մինչև առաւօտ... նա մինչև անգամ չէր ուզում այդ բանի մասին մտածել, չնայելով որ Լուսիրբոզից լսւող աքաղաղների կանչոցը մօտեցող առաւօտն էր գուշակում։

— Ինչ պէտք է անէր... յանդգնէր մենակ նաւակով անցնել գետի միւս կողմը... նա յաճախ էր տեսել, թէ մարդիկ ինչպէս մենակ թիավարում են նաւակները... այդ բանը նրան շատ վտանգաւոր էր երևում, սակայն նա ուրիշ ելք չունէր, եթէ ցանկանում էր հայդուկին պատահել, որը նրան այնտեղ սպասած ու լարուած սպասում էր։

Գեղջկուհին երեխան գրեց աւազի վրայ, որովհետև նրա մասին այլևս չէր մտածում և կռացաւ կապած նաւակը շղթայից ազատելու։ Նա գողում էր։ Շղթան ոչ թէ կապած էր, այլ նաւակի հետ կողպուած... Այդ բանը երևի թիւրքերի գործն էր, որոնք գրաւով ուզում էին խանգարել գիշերային նաւավարութիւնը։

Իլիցան գողալով կանգնած էր նաւակի մօտ։

Լուսիրբոզի աքաղաղներն սկսեցին յաճախակի կանչել... արևելքը սկսեց աղօտ մոխրագոյն տեսք ստանալ... դա նշան էր, որ մի կամ երկու ժամից յետոյ պէտք է լուսանար...

Պառաւը յուսահատութիւնից հեկեկաց և այժերը հաւաքելով՝ աշխատեց կամ նաւակի կողպէքը կոտրել և կամ շղթան կտրել։ Սակայն թէ մէկը և թէ միւսը անկարելի եղաւ անել։

Տաքացած և շնչասպառ բարձրացաւ նա տեղից և մնաց յուսահատ կանգնած։

Յանկարծ երրորդ անգամ կռացաւ և երկու ձեռքերով բռնելով այն փայտէ ցիցը, որի վրայ կողպուած էր նաւակը, աշխատեց գետնից հանել... սակայն ցիցը շատ էր ամուր մտել գետնի մէջ։

Պառաւը կրկնապատկեց, եռապատկեց իր եռանդը... Նրա արտակէզ բազուկները լարուեցին, ջղերը ուժեղացան և պողպատի պէս ամրապնդուեցան, այժերի չափազանց լարումից սակրները ճարճատեցին և տաք քրտինքը ծածկեց նրա երեսը...

Հեւալով և այնպէս յոգնած, կարծես մի սայլ փայտ էր անտառից կըտրել, բարձրացաւ տեղից, շունչ քաշեց, կրկին բռնեց ցցից և նոր այժով ու յամառութեամբ սկսեց ցիցը դէս ու դէն շարժել, գետնից հանելու համար։

Նրա կուրծքը հեղուց բարձրանում էր ու ցածրանում։ Պառաւի ոտները բոլորովին խրուեցին աւազի մէջ և կէս ժամեայ սարսափելի կռուից յետոյ պատեց գետինը և նա վերջապէս կարողացաւ ցիցը գետնից հանել։

Շղթայի խողոտ շառաչիւնը խանդարեց գիշերային հանգստութիւնը... Իլիցան սաստիկ հառաչեց և բոլորովին ուժասպառ ընկաւ աւազի վրայ։

Մի քանի բոպէից յետոյ նաւակը, որի վրայ գտնուում էին Իլիցան, նրա թոռը և փայտէ մեծ ցիցը, լողում էր գետի սև ալիքների վրայով։

Ե.

Մի տեղ Իսքէր գետը գուրս է գալիս ժայռոտ նեղ ձորից և յետոյ հեռանալով լայնանալով՝ շարունակում է ցած և հարթ ափերի միջով հոսել։

Գետի հոսանքը քշեց նաւակին, առանց հնազանդուելու պառաւ գեղջկուհու աշխարհ ձեռքով վարած զեկին։ Այդպիսով նաւակը իր սովորական կայարանից հեռացաւ։ Իլիցան աշխատեց չկանգնել գետի այն ափին, որտեղից նա առաջին անգամ նաւակ էր նստել։

Վերջապէս գետի հեղհեղուկ սառակացող հոսանքը նաւակը տարաւ բոլորովին ուրիշ ուղղութեամբ և պառաւը մեծ դժուարութեամբ կարողացաւ ցամաքը հասնել։

Նա իջաւ ափ, երեխան ձեռքին... մի քիչ բարձրացաւ և իր քայլերն ուղղեց դէպի անտառ։

Երբ Իլիցան մօտեցաւ անտառի այն տեղին, որտեղ նա հանդիպել էր ապստամբ հայդուկին, երկու ժայռերի արանքում նա նկատեց մարդկային մի սառուցեր, որ շարժւում էր...

Այդ սառուցերը հէնց այն արարածինն էր, որին նա փնտռում էր։

Հայդուկը մօտեցաւ պառաւին...

— Բարի երեկոյ, երիտասարդ... ահա քեզ...

Այս խօսքերով նա երիտասարդին հաց տուեց, լաւ իմանալով, որ նա դրան ամենից շատ կարիք ունի։

— Շնորհակալ եմ քեզանից, մայրիկ... պատասխանեց նա ճնշուած ձայնով։

— Սպասիր... հապիր այս զգեստը... ասաց պառաւը՝ մեկնելով երիտասարդին մի հագուստ, որով նա ճանապարհին փոխարինել էր իր թոռանը։

— Այս հագուստը ես գողացել եմ վանքից... թող Աստուած ների ինձ դրա համար... ես մեղք եմ գործել...

Իլիցան այդ հագուստը վերցրել էր վանքի դռան պատից, համոզուած լինելով, որ դա պատկանում էր վանքի ծառային։ Հէնց որ սակայն հայդուկը հագաւ այդ զգեստը, պառաւը միայն նոր նկատեց զարմացած, որ դա վարդապետի հագուստ է։

— Միևնոյն է ինձ համար... սրա մէջ մի քիչ կը տաքանամ ես, ասաց երիտասարդը՝ փոխարինելով չոր և բրդեայ հագուստի մէջ։

Նրանք քայլեցին միասին։

Հայդուկը լուռ ուտում էր... նա ցըրտից դողում և սաստիկ կաղում էր։ Նա մօտ քսան տարեկան մի նիհար և բարձրահասակ երիտասարդ էր։

Նրա ուտելուն և սովածութիւնը յագեցնելուն չխանգարելու համար, պառաւը նրան հարցուփորձ չարեց, թէ ով և որտեղացի էր երիտասարդը. ինքն էլ ընդհակառակն ցածր ձայնով էր խօսում. սակայն հետաքրքրութիւնը վերջապէս յաղթեց պառաւին, որը ե-

բիտասարդին հարցրեց նրա սրտեղից գալը...

Հայդուկը պատասխան պատմեց, որ ինքը ոչ թէ լեռներից, այլ գաշտից է եկել։ Այն գիշերը թշնամիներից շրջապատուելով՝ ինքը կորուել է իր ընկերներից և մնացել է Վեսլեցի այգիներում։ Յետոյ նա ճանապարհը կորցրել է, մոլորուել և մեծ վտանգների յաղթելուց յետոյ՝ հասել է մինչև այդ անտառը։ Երկու օր և երկու գիշեր նա ոչինչ չէ կերել, բոլորովին ուժասպառ է եղել շարունակ գնալով, վիրաւորուած ոտներով և տաքութեան մէջ... Այժմ նա ուզում է գնալ դէպի լեռները ընկերներին գտնելու կամ թէ չէ՝ թաղնուելու։

— Դու չես կարող գնալ, որդիս... ասաց պառաւը, տաք ինձ հրացանդ և մի քիչ թեթեացիր...

Ձախ ձեռքով վերցրեց հրացանը, իսկ աջով բռնեց երեխային։

— Ե՛կ, եկ... հաւաքիր ուժերդ, երիտասարդ։

— Ո՞ւր պէտք է ես այժմ գնամ, մայրիկ...

— Ինչպէ՞ս թէ ուր... տուն... ինձ մօտ...

— Ճի՞շտ ես ասում... Շնորհակալ եմ քեզանից, մայրիկ։ դու շատ բարի ես... ասաց արտասունքներով խեղդուած երիտասարդը, համբուրելով պառաւի նիհար ձեռքը, որի վրան երեխան էր գտնուում։

— Մարդիկ այժմ սարսափի մէջ են գտնուում և ինձ կենդանի կերպով կը թաղեն, եթէ իմանան, որ... ասաց գեղջկուհին... սակայն ինչպէս կարող եմ ես քեզ այստեղ թողնել... չերքէզները կը բռնեն քեզ, թող Աստուած պատժի նրանց... նրանցից գիւղումն էլ կան... Տէր Աստուած, ինչո՞ւ համար է այս փորձանքը... Մի՞թէ սարսափելի չէ, որ նրանք մեր թշուառ երկիրն աւերակ են դարձնում... նրանք հաւերի պէս են սպանում մեր զաւակներին... բայց դու այլ ես ոյժ չունես բարձրանալու, երիտասարդ։

Եւ գեղջկուհին հրացանը դրաւ ձախ ձեռքից աջի վրայ և ձախ ձեռքով բռնեց նրան։

Նրանք հետզհետէ մտնում էին կաղնի անտառի խորքը։ Արեւելեան կողմում ծառերի արանքով նշմարւում էր երկնքի հետզհետէ ապիտականալը։

Զեյտունցիների աքաղաղների ծուղրուղուն աւելի պարզ էր լսւում... երկնքի ատաղձն ատաղձանաբար գունատւում էին։

Արդէն սկսում էր հետզհետէ լուսանալ և նրանք գիւղից դեռ կէս ժամուայ հեռաւորութեան վրայ էին գտնուում, թէև այնպէս գանգատ, ինչպէս հայդուկն էր գնում, երկու ժամից յետոյ հազիւ հասնէին գիւղը։

Գեղջկուհին սաստիկ վշտացած էր, աւելի սիրով նա կըշալակէր երիտասարդին։

Հայդուկը գիտեց իր շուրջը։

— Արդէն լուսանում է, լսուեց նրա ձայնը։

— Վատ է... մենք ժամանակին չենք կարողանալու հասնել... շշնջաց պառաւը։

Նրանք մի քիչ էլ գնացին։

Ներքևից արդէն մարդկային ձայներ էին հասնում նրանց ականջին։

Գեղջկուհին կանգնեց։

— Այլ ես անկարելի է առաջ գնալ, երիտասարդ... մի ուրիշ ելք պէտք է գտնել...

— Ի՞նչ ես կարծում, մայրիկ, ինչ անենք... հարցրեց երիտասարդը, որը գեղջկուհուն համարում էր և՛ իր մայրը, և աղջկանը, և՛ փրկիչը, և՛ Նախախնամութիւնը։

— Թաղնուիր անտառում մինչև երեկոյ, և երբ մութն ընկնի՝ ես քեզ կը սպասեմ այ հէնց այս միւնոյն տեղը և յետոյ քեզ կըտանեմ ու կը թաղցնեմ իմ տանը...

Երիտասարդը համոզուեց, որ պառաւի առաջարկածը ամենալաւ ելքն է։ Պառաւը նրան վերադարձրեց հրացանը։

Նրանք հրաժեշտ տուին միմեանց։

Հէնց որ պառաւը շարժեց երեխային, իսկոյն արտասուեց։

— Ա՜յ իմ երեխաս, մանուկս... նա արդէն մեռել է... նրա ձեռքերը սառել են։

Հայդուկը կայծակնահար եղածի պէս կանգ առաւ։ Գեղջկուհու վիշտը նրան էլ համակեց... երիտասարդն ուզում էր նրան մխիթարել, բայց խօսք չէր գտնում ասելու։

Միայն այդ ժամանակ հասկացաւ երիտասարդը, որ այլևս օգնութիւն չէր կարող սպասել այդ ազնիւ կնոջից, որի հոգին մեծ ցաւ էր տանջում։

— Վա՜յ իմ երեխայ... իմ սիրելի երեխա,—հառաչում էր խեղճ կինը՝ իր թոռան գունատ դէմքը գիտելով։

Եւ զարհուրած ու յուսաբեկ ճանապարհ ընկաւ հայդուկը դէպի անտառի խորքը։ Իսկ նրա յետեւից լսւում էր պառաւի հառաչող ձայնը։ Թաղնուիր... երիտասարդ... մինչև երեկոյ... մինչև որ ես քեզ այստեղ գտնեմ...

Պառաւն անյայտացաւ անտառի մացառուտներում։

Զ.

Երբ լուսացաւ, երկնքի վրայ վերջապէս երեւաց մայիսեան պայծառ և փայլուն արեւը, մի քանի ամպամած և անձրեւային օրերից յետոյ։

Շիշմանի ժայռի ստորոտում տարածուող գեղեցիկ և երկարաձիգ հովիտը, որ զարդարուած էր մայիսեան կանաչով և կտրուած նրա միջով հոսող արծաթափայլ գետով, լողում էր արեւի ճառագայթների մէջ։

Հազիւ էր երեւացել արեւակը հորիզոնի վրայ, երբ ճանապարհի վրայ երեւաց թիւրքական հեծելազունդը, իսկ նրա ետեւից՝ հետեւակ զօրքը։ Դրանք շուտով հասան Խաքէր գետին և կանգ առան նրա ափին։

Հետեւակ զօրքը բաղկացած էր մօտ 300 հոգուց. նրանց առաջից քայլում էին բաշիբոզուկները, զանազան տեսակի սպառազինութեամբ։ Մնացածը, որ մեծագոյն մասն էր կազմում, չերքէզներ էին, նոյնպէս զանազան տեսակ զինուած։

Մի քանի բոլորից յետոյ հեծեալ զինուորները կարգեցին չերքէզների առաջը և նրանց կողքին կանգնեցին։

Այդ ազմկալի և խառնիճաղանճ ամբոխին առաջնորդում էր Զամբալա անունով նշանաւոր չերքէզը, որ մի գաժան և արիւնարբու կովկասցի էր։ Հէնց այդ միւնոյն աւազակի գնդակն էր երեկ սպանել ապատամբների պարագլուխ Բօթեին։

Զամբալան կանգ առաւ անտառից ոչ հեռու գտնուող հնագարեան մի եկեղեցու աւերակների մօտ։

Անտառի ձախ կողմում երեւում էին անմատչելի ժայռերու ձորեր, իսկ աջ կողմում մինչև երկրորդ մերկ սա-

բը տարածում էին Զելոպիեկի գաշտերն ու պարտէզները։ Անտառի ծայրում ծառերի մէջ երևում էր հովուական մի խրճիթ, որի սեփականատէրը այդ ժամանակ ըստ երևոյթին բացակայ էր։

Ամենքի աչքերն ուղղուած էին այն մեծ, գագաթկ և խաղաղ անտառի վրայ, որտեղ թաղնուել էր յեղափոխական հայդուկը։

Սակայն Զամբալայի զօրամասը նրան չէր փնտռում։

Անցեալ գիշեր Վրացայում լուր էր տարածուել, իբր թէ լուսաբացից մի ժամ առաջ կամիտաչի յեղափոխականների մի մեծ խումբ լեռներից իջել էր այդ միենոյն անտառը, հաւանօրէն Իսքէր գեան անցնելու և Սատարապլանինայում թաղնուելու։

Մի օր առաջ եկած յաղթանակով ոգևորուած և խրախուսուած՝ թիւրք գինուորներն ապատում էին իրենց առաջնորդի հրամանին, երբ Զամբալան ձիուց իջաւ և յարձակման եղանակի ու ձևի մասին սկսեց խորհրդակցել մի քանի նշանաւոր բաշիբոզուկների հետ։

Նա քառասուն տարեկան մի թիւրգոյն, բարձրահասակ և սեամօրուս մարդ էր, հագած չէրքէզական փայլուն հագուստ և տաբերից մինչև գլուխ սպառազինուած։ Չէրքէզական բարձր փափախի տակ փայլում էին նրա աւազակաբարոյ և վայրենի աչքերը։

Այդ րոպէին խրճիթից լսուեց հրացանի տրաքոց և լեռների բազմաձայն արձագանգը կրկնեց հրացանի ձայնը։

— Կոմիտաչիներ են... կոմիտաչիներ... լսուեցին ամէն կողմից։

Ամենքն իրանց աչքերը ուղղեցին դէպի խրճիթը, սակայն նրա մուտքի մօտ նկատեցին մի քիչ ծուխ, որը առաւօտեան մեղմ քամուց ծառի ճիւղին էր կանգնած։

Մի քանի րոպէ տևեց սարսափը, մինչև որ թիւրք գինուորները կրակելով պատասխանեցին, որ անտառում հազար տեսակ արձագանգ տուեց։

Սակայն հրացանների ծուխի միջից լսուեց... Զամբալան... Զամբալան ըսպանուել է։

Եւ իսկոյն, Զամբալան փռուել էր գետնի վրայ... Նա սպանուել էր... Թշնամու գնդակը ծակել էր նրա կոկորդը... նրա բերանից առատօրէն հոսում էր արիւնը։

Խրճիթից արձակած հրացանի գընդակն էր գիպել նրան։

Սպանման լուրը կայծակի արագութեամբ տարսափ տարածեց գինուորների մէջ... ամբողջ թիւրք զօրամասը ցրուեց... ամէն մէկը թաղնուեց, ով որտեղ կարող էր...

Թիւրք առաջնորդի գիակը հեռու տարան։ Հեծելազօրքը նոյնպէս շուտով անյայտացաւ։

Սակայն անտառից մի երկրորդ արձակում չլսուեց։

Երկար ժամանակից յետոյ, մի խումբ չէրքէզներ իրենց շուրջը տիրող խորին լռութիւնից և հանգստութիւնից եզրակացրին, որ ապատամբները պէտք է ապաստանած լինէին լեռներում. գրանից յետոյ միայն նրանք վճռեցին մտնել անտառը և իրենց առաջնորդին սպանողին բռնել։

Նրանք կաղնու տակ միայն մի ապատամբի գիակ գտան... երեսուն տարեկան մի սեամօրուս երիտասարդ էր նա, որի վիրաւորուած ոտը շորով փաթաթուած էր։

Չէրքէզները համոզուեցին, որ ապատամբները փախել են դէպի լեռները։

Բօթեի սպանուելուց յետոյ, նրա գինուորների մի մասը, թուով 40 հոգի, ոտից վիրաւորուած քաջ Պերայի առաջնորդութեամբ ապաստանեց լեռներում։ Ամբողջ գիշերը նրանք մոլորուեցին մացառներում. որից յետոյ վերջապէս յոգնելով և սովածանալով՝ իջան Զելոպիեկի անտառը, որտեղ նրանք մեռածի նման քնեցին, առանց նկատելու, որ թշնամին նրանց հետքը գտել է։ Չէրքէզական մի գնդակ պատահմամբ սպանել էր Պերային։ Ուրիշ ոչ մի գիակ անտառում։

Երբ սակայն չէրքէզները մտան անտառի խրճիթը, մի ուրիշ գիակ էլ գտան։

— Քահանայ է... ապատամբ... գոռացին զարմացած չէրքէզները։

Սպանուածը մի անմօրուս երիտասարդ էր, որի գլուխը ծակուել էր թշնամու գնդակից։

Երիտասարդը թէպէտ ծածկուած էր վարդապետական զգեստով, սակայն նրա տակից երևում էր ապատամբի արիւնոտ հագուստը։ Վառօդից սևացած նրա վէրքից կարելի էր ենթադրել, որ երիտասարդը ինքնասպանութիւն էր գործել, Զամբալային սպանելուց յետոյ։

Իրանց սովորութեան համաձայն՝ բաշիբոզուկներն այս անգամ չկարեցին հայդուկի գլուխը, որպէսզի կախեն մի ձողից և իբրև յաղթութեան նշան՝ դէս ու դէն պտ ելնեն գա... իրենց առաջնորդի մահը նրանց համար յաղթութիւն չէր...

Նրանք բաւականացան հրգեհելով միայն այն խրճիթը, որտեղ թողել էին նաև սպանուած հայդուկի գիակը։ Խրճիթը մխում էր դեռ երեկոյեան էր, երբ թիւրք գինուորներն սպանեցին այն 13 ապատամբներին, որոնք իջել էին լեռներից և ուզում էին Իսքէր գեան անցել։

Ելեցան վաղուց է մեռել։ Սակայն նրա կիսամեռ թոռը դեռ ապրում է. նա ապրեց, այսօր նա մի առողջ և քաջ մարդ է և կոչւում է Մայիսոր Հ.։

Երբ հանգուցեալ տատը նրան պատմում էր իր գլխով անցած այս ամբողջ պատմութիւնը, միշտ սովորաբար աւելացնում էր, որ ինքը նրա զարմանալի առողջութիւնը վերագրում է ոչ թէ բարկացած վանահօր անփոյթ աղօթքին, այլ այն բարի գործին, որ թէպէտ չկարողացաւ կատարել, բայց իր սրտի խորին անկիւնից ցանկանում էր կատարել։

Գերմ. Թարգ. Լևոն Բարայեան



Приложеніе къ № 2—1915 г. газ. „Арегъ".
Электро-типографія Н. А. Эриванцова, Баку.